

ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԶԱՏ

ՀԱՅՐ ՍՏԱԼԻՆԻՆ

Մանր է հայ աշխատավորի կյանքը հայրենի երկրից դուրս, ավելի սարսափելի՝ հայ երիտասարդի վիճակը: Նրա վառ հույսերը դեռ պատանի հասակից, կյանքի շեմքին ոտք դնելու առաջին օրվանից փշուր-փշուր են լինում: Եթե նա որոշել է գիտնական դառնալ՝ հանդիսվում է համալսարանի փակ դռներին, եթե երազել է արվեստագետի փառքին արժանանալ՝ նրան նետում են թափառաշրջիկ գործազուրկների շարքը, նա աշխատանք է փնտրում սովամահ շինելու համար, սակայն օտարի համար աշխատանք չկա:

Այժմ դժվար է պատկերացնել այդ երիտասարդի երջանկությունը, երբ մայր հողի վրա հանգրվան գտնելու առաջին իսկ օրը նրան հարցնում են՝ «Ինչո՞վ կուզենայիք զբաղվել»: Այս բառերը, որ այնքան սովորական ու բնական են թվում սովետական արևի տակ աճած յուրաքանչյուր երիտասարդի համար, այդ մինչև հոգու խորքը հուզող բառերը մենք մեր կյանքում լսեցինք առաջին անգամ: Եվ մենք հայտնեցինք, թե ինչով ենք

ցանկանում զբաղվել. այդ բոպեից իրականացան մեր իղձերը: Ապրելու ոչ մի հնարավորություն չունեցող երիտասարդը դնաց գործարան, ձեռք բերեց իր ցանկացած մասնագիտությունը ու դարձավ ընկերների սիրելին. գործազուրկ երաժիշտն ու երգչուհին իրենց կյանքում առաջին անգամ արժանացան լուսաշավոր թատերական հասարակայնության ջերմ ընդունելությունը. հալածված պոետը տպագրված տեսավ իր հոգու արտահայտությունը:

Մենք դարձանք լիարժեք մարդ, Սովետական Միության իրավահավասար ազատ քաղաքացի:

Ահա այս է մեր, երիտասարդներիս իրականություն դարձած երազը: Եվ այս բոլորի համար մենք մեր երախտագիտության առաջին խոսքն ենք ասում մեր մեծ ազատարարին, մեր հարազատ հորը, մեր առաջնորդ, հանճարեղ Ստալինին:

Արտասահմանից Հայրենիք վերադարձած երիտասարդներ՝
ՄՈՒՇԵՂ ՄԿՐՏՉՅԱՆ, ՎԱԶԵ
ՀԱՍՐԱԹՅԱՆ, ԹԱԳՈՒՀԻ ՔԵՍԵՅԱՆ